



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԹՂԹԱԿՑԻՆ

(7 ապրիլի 1967 թ.)

ՀԱՐՑ.— Ինչպես արդեն հայտնի է, Երուսաղեմի հայերեն ձեռագրերը վերադարձվել են Երուսաղեմ՝ հայոց պատրիարքարան: Այս առթիվ, Վեհափառ, ի՞նչ կկամենայիք հաղորդել մեր ունկնդիրներին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք երջանիկ ենք, որ Երուսաղեմի մեր պատրիարքության գանձատնից անհետացած փառերեք քանկագին ձեռագրերը, միացյալ նիզերով փրկվեցին վանառից և ձեռամբ տ. Շահեն Եպիսկոպոսի վերադարձան իրենց տեղը, ուր դաբեր շարունակ ապահով պահպանվել էին նրանք՝ մեծ խնամքով ու գուրգուրանքով, իբրև հայ եկեղեցու և ազգի սեփականությունը եղող սրբություններ և հայ արվեստի գլուխ-գործոցներ:

Այսու, մեկ անգամ էս Մեր խնդակցությունն ենք ներկայացնում Երուսաղեմի հայոց պատրիարքին և միաբանության և, հաևուն մեր եկեղեցու, Մեր ջերմագին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր այն արտացավ անձանց՝ եղգևորականներ և աշխարհականներ, որոնք բանիվ և գործով ու կորովի կեցվածքով մեծապես նպաստեցին հիշյալ ձեռագրերը օտարացումից փրկելու գործին:

Մենք հույս և վստահություն ենք հայտնում, թե Երուսաղեմի պատրիարքությունը ի գործ կդնի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հետ այսու այլևս երբեք հնարավոր չդառնան նման ցավալի երևույթներ:

ՀԱՐՑ.— Վեհափառ, թույլ տվեք իմանալ Ձեր կարծիքը՝ ձեռագրերի անհետացման պատասխանատուների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Թե որոնք պետք է պատասխանատու նկատվեն ձեռագրերի՝ գանձատնից անհետացման համար, անշուշտ, այդ տակավին հայտնի չէ, և Մենք կարծում ենք, թե այդ հնարավոր կդառնա պարզել ու նշանել ապագային, երբ խաղաղ և առարկայական պայմանների մեջ կարելի կլինի ֆենել բոլոր տվյալները, եկեղեցական իրավասու իշխանությունների կողմից:

Այսու, Մենք պիտի կամենայինք ջերմապես կոչ անել մեր հանրային կարծիքին և մամուլին, որ այդ իմաստով ամեն կասկածանք ու վեճ վերջ գտնեն, ինչ որ ծանրորեն վնասաբեր ենք նկատում մեր եկեղեցու և ժողովրդի անվան ու նրանց բարի համբավին համար:

Բոլորս պետք է մեր խնդությունը հայտնենք, որ կորսված գանձը գտնվեց, և մխիթարություն համայն մեր ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

